«Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը» հետազոտաան թեմայի շրջանակներում 2020 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թթ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հետազոտական խմբում ընդգրկված գիտաշխատողների կողմից իրականացվել են արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների, վիճակագրական տվյալների, ինչպես նաև մատենագիտական նյութերի հավաքման աշխատանքներ, որոնց հիման վրա պետք է կատարվեն ուսումնասիրությունները:

Մասնավորապես, Իզմիթի գավառի հայերի տնտեսական վիճակի և Հայոց ցեղասպանության տարիներին նրանց կրած նյութական կորուստների մասին ուսումնասիրության համար ԳԱԹ-ի Թ. Ազատյանի և Մատենադարանի Ա. Ալպոյաճյանի, Մ. Իզմիրլյանի ֆոնդերից, ինչպես նաև Կաթողիկոսական դիվանից ընտրվել են վավերագրեր, որոնք արժեքավոր վիճակագրական տեղեկություններ են պարունակում ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Ընտրվել են Իզմիթի գավառի բնակավայրերի (Իզմիթ, Ադաբազար, Պարտիզակ, Ասլանբեկ, Արմաշ և այլն) մասին մենագրությունները, Իզմիթում հրատարակվող «Բութանիա» և Պարտիզակում լույս տեսնող «Պարտիզակ» և «Փարոս» պարբերականների հավաքածուները, որոնցում արտացոլված է Իզմիթի գավառի հայության կյանքը: Կ.Պոլսի «Արևելք», «Մասիս», «Հայրենիք», «Կոհակ», «Բյուրակն», «Փունջ», «Մանզումեի էֆքեար», «Բյուզանդիոն», «Ժամանակ», «Ազատամարտ» և «Ճակատամարտ» պաբերականների տարբեր տարիների հավաքածուներից ընտրվել են Իզմիթի գավառի հայկական բնակավայրերի մասին թղթակցություններ, ճամբորդական նոթեր և հոդվածներ: Ընտվել են նաև Հայոց ցեղասպանության մասին այս ուսումնասիրությանն առնչվող տարբեր հրատարակություններ:

Հալեպի նահանգի Այնթափի գավառի ֆինանսատնտեսական վիճակի ու հայ բնակչության կրած նյութական կորուստների վերաբերյալ առանձնացվել են Հալեպի նահանգի առաջնորդական վիճակների պաշտոնական տեղեկագրեր, արխիվային ու դիվանագիտական փաստաթղթեր, միսիոներների հաղորդած տեղեկություններ, հուշագրություններ ու հուշամատյաններ, ժամանակի մամուլից քաղված տեղեկություններ, ինչպես նաև հայ և օտար հեղինակների հետազոտություններ:

Հավաքվում են ցեղասպանության ընթացքում օսմանյան իշխանությունների կողմից հայերի նյութական ունեցվացքին

տիրանալու և մշակութային արժեքները յուրացնելու ու ոչնչացնելու «օրենսդրական» մեխանիզմներին վերաբերող նյութերը:

Հավաքչական աշխատանքներին զուգընթաց ավան առ ավան, գյուղ առ գյուղ պատրաստվում են նաև հայպատկան գույքի և մշակութային արժեքների ցուցակներ, զոգահեռաբար շարադրվում է նաև ուսումնասիրության տեքստը:

Գիտական ծրագրի ղեկավար, պ. գ. դ. , պրոֆեսոր
Ա. Ց. Մարուքյան

Հաշվետվություն

«Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան. արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ»)» գիտահետազոտական թեմայի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների մասին

(01.04.2020-01.07.2020)

Հաշվետու ժամանակաշրջանում **«Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան. արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ»)»** թեման կատարող գիտահետազոտական խումբը իրականացրել է աշխատանքներ թեմայի վերաբերյալ գրականության հավաքելու և դրանք համակարգելու ուղղությամբ: Ձեռք են բերվել և մշակվել տարալեզու՝ անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն, ռուսերեն, ադրբեջաներեն և հայերեն մի շարք աշխատություններ, հոդվածներ, ինտերնետ կայքեր: Սահմանվել են ուսումնասիրության հիմնական ուղղությունները, բաժիններն ու ենթաբաժինները: Կատարվել է աշխատանքի թեմատիկ բաժանում, առանձնացվել են հանգուցային հարցերը, մշակվել է աշխատանքի մեթոդաբանությունը: Ըստ այդմ՝ գիտահետազոտական խմբի անդամներ պ.գ.թ., դոցենտ Լ.Հարությանը և թուրքագետ Տ.Մանուկյանը կաշխատեն Վրաստանում իսլամական գործոնի, իսկ պ.գ.թ. Ն. Նավասարդյանը և պ.գ.թ., դոցենտ Ա. Փաշայանը՝ Ադրբեջանում իսլամական գործոնի ուսումնասիրության ուղղությամբ:

Գիտահետազոտական խմբի անդամ **Տ. Մանուկյանը** հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թիրախային անձանց և խմբերի սոցիալական կայքերի մշտադիտարկում: Փորձ է արել նամակագրական կապ հաստատել արևմտյան, ռուսաստանյան, տարածաշրջանային ազդեցիկ փորձագետ-վերլուծաբանների հետ, որոնցից ստացված տեղեկատվական վերլուծական ինֆորմացիան որպես սկզբաղբյուր (oral history) կօգտագործվեն հետագա աշխատանքներում:

Գիտահետազոտական խմբի անդամ **Լ. Հարությունյանը** 2020 թ. հունիսի 24-ին մասնակցել է Վրաստանի Քաղաքականության ինստիտուի (Georgian Institute of Politics, GIP) կազմակերպած "Does being nationalist mean being Eurosceptic in Georgia" հեռավար քննարկմանը, որի մասնակցում էին առաջատար մասնագետներ ինչպես Վրաստանից, այլպես էլ ԱՄՆ–ից և Եվրոպական երկրներից: Քննարկման նպատակն էր հետազոտել COVID-19 համավարակով պայմանավորված ազգայնական տրամադրությունների ուժեղացումը Վրաստանի օրինակով, ինչպես նաև երկրի փոքրամասնությունների շրջանում նկատվող տրամադրությունների փոփոխությունները: Լ. Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում հավաքել և ուսումնասիրել է հետազոտվող ծրագրի հետ առնչվող հետևյալ հետազոտությունները (Baramidze, R., 2014, Georgia's Muslim Community and State Policy (1991 – 2012). Horosi XXI, Batumi, Basilaia, M., 2011, Coverage of the Law on Religion in Georgian Media, Media Development Foundation, Dvali, A., Badasyan, E. Problems and Foreign Policy Preferences of Kvemo Kartli and Samtskhe-Javakheti Communities. Centre for Cultural Relations - Caucasian House. 2014, Research in Religious Discrimination and Constitutional Secularism. Tolerance and Diversity Institute, 2014, Crisis of Secularism and Loyalty to Dominant Groups, Human Rights Education and Monitoring Center, 2013, Gabuldani, M., 2015, Gaps in the implementation of Anti-discrimination Legislation, Europe for Georgia, Available at: http://eugeorgia.info/ka/article/216/xarvezebi-antidiskriminaciuli-kanonis-ganxorcielebis-processhi-/, Gachechiladze, R., 2008, The Middle East: Space, People and Politics, Bakur Sulakauri Publishing, Tbilisi, Gorgodze, S., 2015, Effectiveness of "1+4" program for ethnic minorities, Liberali, available at: http://liberali.ge/articles/view/3975/ramdenad-efeqturia-14-programa-etnikuri-umtsiresobebistvis , Dvali, A., Badasyan, E. Problems and Foreign Policy Preferences of Kvemo Kartli and Samtskhe-Javakheti Communities. Centre for Cultural Relations - Caucasian House. 2014. P. 9, Kakhishvili, N. 2016. Zakareishvili: as of now opening of a Russian language channel is just an idea. Electronic newspaper - Netgazeti. Available at: http://netgazeti. ge/news/95147/ http://netgazeti.ge/news/95147/ , Kupreishvili, T., 2015, Islamophobia in Media, Mediachecker, Available at: http:// mediachecker.ge/mediawiki/detail/15/, Turadze, E., 2015, Media and Religious Intolerance, Netgazeti, available at: http://netgazeti.ge/news/43919/ , Turadze, E., 2016, Ex-manager of Khichauri Gymnasium: Members of Clergy Threatened the Kids to Break their Teaath, Batumelebi, available at: http://batumelebi. netgazeti.ge/news/33514/ , Parulava, D., 2015, MDF: Turkophobia/Islamophobia accounts for the most cases of xenophobia in media, Liberali, Available at: http://liberali.ge/news/view/16778/ MDF-mediashi-qsenofobiis-yvelaze-meti-shemtkhveva-turqofobiaislamofobiaze-modis , CCA Announces an Opening for Educational Programs in Pankisi gorge - free of Charge, 2016, Civil Activities Center, Available at: http://activities.ge/ge/detail/news/100/, MDF, GDI and TDI Appeal against Guria News in the Charter of Journalistic Ethics for a Turkophobic Publication, 2015, Media Development Foundation, Available at: http://mdfgeorgia.ge/geo/view_news/387, A Political Section of NDI Research: Ilya II-91%, Alasania - 60%, Gharibashvili - 54%, 2014, Pressa.ge, Available at: http://presa.ge/new/?m=politics&AID=30840, NDISsurvey Indicates that the

Patriarch's Rating Is Dropping, 2015, electronic newspaper – Netgazeti, available at: http://netgazeti.ge/news/40880/ , Civil Georgia: Thousand Protest the Law on Legal Status of Religious Minorities, 2011, Available at: http://civil.ge/geo/article.php?id=24311 74, A Young Man Has Been Killed, 2016, TV Broadcaster Rustavi 2, available at: http://rustavi2.com/ka/news/35688, The Rights of the Child in Boarding Schools under the Georgian Orthodox Church and Muslim Confession, a report of the Public Defender of Georgia, 2015, the Public Defender of Georgia, available at: https://drive.google.com/file/d/0B9BM3M8hbgAUR1Utd2o4dkZzWWs/view, Strategic Directions of the Development of Education and Science System (a draft version), the Ministry of Education and Science of Georgia, available at: http://www. mes.gov.ge/uploads/strategia..pdf [accessed 17.09.2016], A Statement on Severe Violation of the Rights of Muslims in Mokhe, 2014, Media Development Foundation, Available at: http://mdfgeorgia.ge/geo/view_statements/125, Trust towards the Church from 17 May to 2 June, 2013, Netgazeti, available at: http://netgazeti.ge/news/23241/ , A Heartfelt Congratulation to the Patriarch of Georgian from a Muslim, 2016, Marshall Press, Research in the Development of Electronic Communication in Georgia, 2013, the Institute for Development of Freedom of Information, GeorgianPress: According to the survey findings 94 per cent of respondents considers the Church as the most trustworthy institute. Available at: http://georgianpress. ge/com/news/view/1781?lang=1 , Priests called Muslim Students of Khichauri Spiritual School Tatars, 2016, Region, YouTube Video, available at: https://www.youtube.com/watch?v=C-20gH5tAF8 , Official webpage of the Center for Teachers Professional Development, available at: http://tpdc.gov.ge/ , In Expectation of Yet another Stir: 'Traditions Need to be Restored, External Threats - Elimination, and Society Needs Education', 2016, news agency 'Accent', available at: http://accent.com.ge/, Results of 2014 National Census, 2016, National Statistics Office of Georgia, available at: http://census.ge/ge/results/census, Pankisi Youth to Be Prepared for the Enrollment in the Academy of Defense, 2016, Specter, available at: http://speqtri.ge/component/content/article/1-news/22955-pankisel-akhalgazrdebs-thavdacvis-akademiashi-chasarickhad-moamzadeben, Prime Minister: We Plan to Introduce a German Model of Higher Education, 2016, Tabula magazine, available at: http://www.tabula.ge/ge/story/104718-premieri-umaghlesi-ganatlebis-sistemashi-germanuli-modelis-danergvas-vgegmavt, How the Government Tries to Keep Muslim Organizations under their Control, 2015, Human Rights Education and Monitoring Center, available at: https://emc.org. ge/2015/11/26/interviu-mirtag-asadovtan/ , Report of the State Agency on Religious Issues for June-December 2014, State Agency on Religious Issues, Available at: http://religion.geo.gov.ge/geo/document/reports/religiis-sakitxta-saxelmtsifo-saagentos-angarishi, Report of the State Agency on Religious Issues for 2015, State Agency on Religious Issues, available at: http://religion.geo.gov.ge/geo/document/reports/religiis-sakitxta-saxelmtsifo-saagentos-tsliuri, Research in Religious Discrimination and Constitutional Secularism in Georgia, 2014, Tolerance and Diversity Institute, Tbilisi, Public Perception in Georgia. Results of April 2015 survey commissioned by NDI and administered by CRRC Georgia 2015, NDI & CRRC, slide 58, available at:

http://primetimenews.ge/wp-content/uploads/2015/05/NDI-Georgia_April-2015-Poll_Public-Issues_GEO_VF.pdf,

Գիտահետազոտական խմբի անդամ **Ն. Նավասարդյանը** հաշվետու ժամանակաշրջանում աշխատել է «Իսլամական գործոնը իրանաադրբեջանական հարաբերություններում» ենթաթեմայի շրջանակներում: Ուսումնասիրվել է Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության փափուկ ուժի քաղաքականության առանձնահատկությունները, մասնավորապես՝ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում իրանական ներգործության արդյունքում ձևավորված իրողությունները, ինչպես նաև Ադրբեջանի իրանական ծագում ունեցող ժողովուրդների ինքնության վրա իրանական ազդեցության և իսլամի դերակատարության խնդիրները: Ն. Նավասարդյանի կողմից հավաքվել է հետևյալ գրականությունը (AnsgarJodicke, Religion and Soft Power in South Caucasus, Routledge, 2018, Abdollah Baei Lashaki, Masoumeh Goudarzi, The Roots of Tension in South Caucasus: the Case of Azerbaijan Relations, https://www.researchgate.net/publication/314425061_The_Roots_of_Tension_in_South_Caucasus_The_Case_of_Iran-Azerbaijan_Relationship, Anar Valiyev, Azerbaijan: Islam in Post-Soviet Republic, https://www.researchgate.net/publication/293054146_Azerbaijan_Islam_in_a_Post-Soviet_Republic, Julie Wilhelmsen, Islamism in Azerbaijan: How Potent?, Studies in Conflict & Terrorism, Volume 32, Issue 8, 2009, Andrew Kuchins, FarhadMammadov, Iran-Azerbaijan Relations and Strategic Competition in the Caucasus, https://www.academia.edu/5132516/Iran-Azerbaijan_Relations_and_Strategic_Competition_in_the_Caucasus):

Գիտահետազոտական խմբի անդամ **Ա.Փաշայանը** հաշվետու ժամանակաշրջանում կատարել է Ադրբեջանում շիայական և սուննիական ինքնությունների ուսումնասիրության համակարգման աշխատանք: Առանձնացվել է այն գրականությունը, որն առնչվում է Ադրբեջանում արաբական երկրներից ներթափանցած վահաբականությանը և Իրանից ներթափանցած խոմեյնիզմին, որի կենտրոնը Նարդարանն է: Մշակվել են ադրբեջանական մամուլի նյութերը, որոնցից դուրս են բերվել բավական մեծ քանակությամբ նյութեր: Դրանք սկզբնաղբյուրային արժեք ունեն և վերաբերում են Ադրբեջանում կրոնական նոր ինքնությունների ձևավորման խնդիրն:

«Իսլամը Հարավային Կովկասում (Վրաստան, Ադրբեջան. արդի միտումներ, հնարավոր մարտահրավերներ»)» գիտահետազոտական խմբի ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Ա.Փաշայան



Հաշվետվություն

« Չինաստանի Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնության իրականացումը Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում» թեմայի

առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

(01.04.20թ.- 01.07.20թ.)

Ծրագրի կատարող՝ պ.գ.թ. Աղավնի Ալեքսանդրի Հարությունյան

Գիտական այս ծրագրի առաջին եռամսյակի հիմնական խնդիրներից է եղել ուսումնասիրության շրջանակում կատարել թեմային վերաբերող փաստաթղթերի և գրականության հավաքում: Թեմայի ուսումնասիրման համար անհրաժեշտ մասնագիտական գրականության մի մասը վերցվել է համացանցից, ՀՀ-ում ՉԺՀ-ի դեսպանատնից, ՉԺՀ-ում ԳԱԱ ԱԻ-ի գործընկեր ակադեմիաներից և ինստիտուտներից:

Հետազոտվող ծրագրի շրջանակներում իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն 2013թ. Չինաստանի նախագահ Սի Ծինպինի կողմից գործարկված "Մեկ գոտի, մեկ ուղի" (ՄԳՄՈՒ) նախաձեռնութան վերաբերյալ, որը բաղկացած է ցամաքային՝ Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտուց (ՄՃՏԳ) և ծովային՝ 21-րդ դարի Ծովային Մետաքսի ուղուց (ԾՄՈՒ): Այն նպատակ ունի Ասիան և Եվրոպան կապել միմյանց Միջին և Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի և Կենտրոնական Ասիայի միջոցով: Իրենց ռազմավարական դիրքի շնորհիվ Միջին Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան կարևոր հանգույց են Ասիան, Աֆրիկան ու Եվրոպան, ինչպես նաև երեք կարևորագույն տնտեսական ծովային շրջանները՝ Հարավ-չինական ծովը, Պարսից ծոցն ու Միջերկրական ծովը, միմյանց կապելու առումով: Նշենք, որ ՄԳՄՈՒ-ն նախատեսվում է իրականացնել մի շարք միջմայրցամաքային երկաթուղիների, խողովակաշարերի, նավահանգիստների, օդանավակայանների և ենթակառուցվածքային այլ նախագծերի ընդարձակ ցանցերի կառուցման միջոցով:

ԾՄՈՒ-ն լրացնում է ՄՃՏԳ-ն՝ կապելով չինական նավահանգիստները բազմաթիվ երկրների և ծովային գոտիների հետ: Այն նպաստում է Պեկինի ուշադրության սևեռմանը մայրցամաքայինից ծովային ռազմավարության և Ատլանտյան ու Խաղաղ օվկիանոսներից՝ Հնդկական օվկիանոսին: Վերջինս համաշխարհային

տնտեսության և անվտանգության առումով վեր է ածվել ռազմավարական կարևորագույն նշանակության մեծագույն ծովային միջանցքի:

Կատարված ուսումնաիրությունները վկայում են, որ ԾՄՌԻ-ի ռազմավարությունը միտված է Հնդկական օվկիանոսի ափերին, ինչպես նաև Պարսից ծոցում և Միջերկրական ծովում ռազմական կամ աշխարհաքաղաքական ազդեցությամբ չինական հենակետեր կամ «ռազմածովային կայաններ» ստեղծելուն, որը ստացել է «Մարգարտի շարան» անվանումը՝ միաժամանակ նույնացվելով «Երկակի նշանակությամբ լոգիստիկ հանգրվանների» հետ: Չինական «Մարգարտի շարանի» ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է Պեկինի հսկայական տնտեսական և առևտրային ծավալապաշտության և այստեղից բխող՝ ծովային երթուղիների և «ճնշման կետերի» /Զիբութի, Գվադար և այլն/ աշխարհառազմավարական անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ: "Մարգարտի շարանի"-ի ռազմավարությունը Չինաստանի ծովային հաղորդակցության գծերի երկայնքով ենթակառուցվածքային նախագծերի (նավահանգիստներ, օդանավակայաններ, ազատ առևտրի գոտիներ և այլն) իրականացման նպատակ է հետապնդում: Այն հիմնված է Չինաստանի զարգացման համար կենսական նշանակություն ունեցող նավթային և առևտրային ուղիներ ձեռք բերելու անհրաժեշտության վրա:

Հետազոտության ընթացքում գալիս ենք այն հետևության, որ "Մարգարտի շարան"-ի ռազմավարության իրականացմամբ Պեկինը ձգտում է հասնել տարածաշրջանում գերիշխող դիրքերի և հզոր տերության կարգավիճակի՝ Հնդկական օվկիանոսից մինչև Կարմիր ծով ու Սուեզի ջրանցք նավարկության ազատություն ձեռք բերելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ու Հյուսիսային Աֆրիկայում անվտանգության հաստատմամբ իր ներկայությունն ընդլայնելու նպատակով: "Մարգարտի շարան"-ի երկայնքով առանցքային հենակետերի նկատմամբ ռազմավարական վերահսկողության հաստատման շնորհիվ Չինաստանը կարող է փոխել ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում:

Վերլուծության է ենթարկվել "Մարգարտի շարան"-ի ռազմավարության առաջ մղելու պատճառները, նկարագրվել է հավանական դժվարությունները, որոնց հետ կարող է հանդիպել Պեկինը ՝ դրանց իրականացման գործընթացում: Տվյալ թեմայի ուսումնասիրության վերաբերյալ երկու հոդված գտնվում են հրապարակման փուլում:

Մեկ աշխատություն նվիրվել է Չինաստանի փափուկ և կոշտ ուժերի համակցման միջոցով Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի երկրներ “Պեկինյան կոնսենսուսի” և զարգացման չինական մոդելի արտահանման թեմային՝ Պեկինի հանդեպ գրավչություն ստեղծելու և տարածաշրջանում չինական ներկայությունն ապահովելու ու ծավալապաշտությունն ընդլայնելու նպատակով: Այս թեմայի համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գլոբալ

կառավարման հասնելու նպատակով պաշտոնական Պեկինը ստիպված կլինի համատեղել փափուկ և կոշտ ուժերը, քանի որ տարածաշրջանում որոշակի մարտահրավերների և սպառնալիքների (ահաբեկչություն, ծովահենություն, անդրազգային հանցավորություն և այլն) վերացումը անհնար կլինի առանց չինական զինված ուժերի կիրառման և նոր ռազմաբազաների կառուցման:

Ջիբութին տարածաշրջանում չինական ռազմաբազայի վերածված առաջին երկիրն է, որի ուսումնասիրությանը նվիրվել է ևս մեկ աշխատություն:

Հետազոտության այս փուլում առանձին ուսումնասիրվել են նաև Թուրքիան ու Իսրայելը, որոնք իրենց ռազմավարական և աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքի շնորհիվ ընդգրկվել են ՄԳՄՈՒ ծովային և ցամաքային ճանապարհների կառուցման նախագծերում: Թուրքիան մեծ հետաքրքրություն է ներկայացնում Պեկինի համար որպես կարևոր աշխարհաքաղաքական և գեոստրատեգիական «կամուրջ» ՄԳՄՈՒ-ի «Անդր-կասպյան միջանցք»-ի կամ «Միջին/երկաթյա միջանցք»-ի կառուցման ճանապարհին, որը կարևոր դեր է խաղում Արևելքի ու Արևմուտքի միջև էներգետիկ փոխադրումների և ցամաքային, ծովային ու օդային տրանսպորտի փոխգործակցությունը ապահովելու, լոգիստիկ նախագծերի մշակման առումով: Իր հերթին Անկարան ակնկալում է չինական ներդրումներ թուրքական նավահանգիստների, օդանավակայանների, երկաթուղիների, թունելների, էներգետիկայի, ինժեներական, հեռահաղորդակցման և ենթակառուցվածքների հետ կապված այլ ոլորտներում:

Իսրայելի գրավչությունը Պեկինի համար պայմանավորված է ինչպես Թել Ավիվի նվաճումներով հետազոտության և զարգացման ոլորտում, զարգացած տնտեսությամբ, բարձր տեխնոլոգիաներով, կայուն հասարակական և պետական բիզնես միջավայրով, այնպես էլ Պեկինի 'Մարգարտի շարան' ռազմավարության շրջանակներում Հնդկական օվկիանոսը և Միջերկրական ծովը Սուեզի ջրանցքով միացնող ցամաքային կամուրջ և Հեռավոր Արևելքից մինչև Աֆրիկա ու Մերձավոր Արևելք, այնուհետև դեպի Եվրոպա՝ ցամաքով և ծովով շահավետ առևտրային և էներգետիկ ուղիները կապող կենսական կանգառ համարվելու հանգամանքով:

Հետազոտության այս փուլի համար տպագրության հաստատված հոդվածներն են՝

1. *China's "Soft Power" Policy in the Middle East and North Africa*, The Silk Road: Collection of Papers from the Fifth International Conference on Chinese and Asian Studies "The Silk Road" Organized by the Confucius Institute at Sofia, University "St. Kliment Ohridski", Sofia, Bulgaria (May 30-31, 2019), 2020, pp. ISSN.
2. *Middle East and North Africa as a Part of Chinese String of Pearls Strategy*, ORBIS LINGUARUM, Vol., Issue, Езиков свят, Филологическия факултет при ЮЗУ „Неофит Рилски", Благоевград, България, 2020, pp. (DOI: CEEOL, ERIH PLUS, Ulrich's Periodicals Directory, RISC and Scopus).
3. *"String of Pearls" Strategy as a Measure for the Implementation of The Chinese Maritime Silk Road Initiative*, Международный научный журнал "Современные востоковедческие исследования", Казань, International Science Journal "Modern Oriental Studies", Kazan, Vol. 2, No. 2, 2020, pp. ISSN. Российский индекс научного цитирования (РИНЦ)
4. *China and Israel: Evolving Relationship Within the Belt and Road Initiative*, Asian Journal of Middle Eastern and Islamic Studies, Taylor and Francis Group, Shanghai International Studies University, 2020, pp. ISSN
5. *Chinese Belt and Road Initiative and Turkey's Middle Corridor*, Россия – Китай: история и культура: сборник статей и докладов участников XIII Международной научно-практической конференции. – Казань: Издательство «Фэн» АНРТ, 2020, с. ISBN.
6. Djibouti: China's First Overseas Strategic Stronghold in the Maritime Silk Road Strategy, Eastern Asian Studies, Vol.: IV, IOS NAS RA, Yerevan, 2020, pp. ISBN.

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում գիտական ծրագրի անդամը հետազոտվող թեմայի շրջանակներում զեկույցներով հանդես կգա մեկ միջազգային գիտաժողովի՝

- XIII Международная научно-практическая конференция «РОССИЯ – КИТАЙ: ИСТОРИЯ И КУЛЬТУРА», Институт международных отношений Казанского (Приволжский) Федерального Университета, Казань, 8-10 октября 2020 г.

Զեկույցի թեման՝ Chinese Belt and Road Initiative and Turkey's Middle Corridor.

Հարկ է նշել նաև, որ Պեկինի Սոցիալական գիտությունների ակադեմիայի Արևմտյան Ասիայի և Աֆրիկայի հետազոտությունների ինստիտուտի ղեկավարության հետ իրականացվող ծրագրի շրջանակներում համատեղ հոդվածներ գրելու և խորհրդակցություններ անցկացնելու ուղղությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել:

Ծրագրի ղեկավար՝ պ.գ.թ. Աղավնի Հարությունյան

ԳԱԱ ԱԻ Միջազգային հարաբերությունների

բաժնի առաջատար գիտաշխատող

30.06.2020թ.